

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՌԱՄՊԵԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Առասպելականացումը ժամանակակից մշակութաբանությունը սահմանում է որպես գեղարվեստական նոր պատկերի կամ կերպարի ձևավորում իրական պատմական իրադարձությունների, անձերի կենսագրությունների հիման վրա, ինչը կատարվում է կամ պատմական փաստերի բացակայության, մոռացության հետևանքով, կամ դրանց միտումնավոր խեղաթյուրման ճանապարհով: Ժողովրդական բանահյուսական ուշ շրջանի այդպիսի բնույթ ունեցող տեքստերի դեպքում մենք առաջին հերթին գործ ունենք պատմական փաստերի չիմացության կամ մոռացության հետևանքով առաջացած ավանդությունների, գրույցների, առասպելական մոտիվների հետ, որոնք հյուսվում են ինչ-որ երևույթ, իրադարձություն բացատրել-ներկայացնելու, պատմական անձի մասին բացակայող տեղեկույթը լրացնելու համար: Առասպելականացման այս սկզբունքները տեսանելի են նաև Սայաթ-Նովայի կերպարի շուրջ հյուսված ավանդություններում, դրանցում իրացվող առասպելական մոտիվների տեսքով:

Արութին-Սայաթ-Նովա-Տեր Ստեփանոս քահանա իրական պատմական անձնավորության առասպելականացման պատճառներն են՝

- կենսագրական փաստերի բացակայությունը,
- բանաստեղծի՝ իր խաղերի քնարական հերոսի հետ նույնացումը,
- ժամանակի հետ չխամրող ու ավելի զարգացող հետաքրքրությունը նրա կերպարի նկատմամբ,
- աշուղին ու աշուղությունը բնութագրող ընդհանուր վիպական-առասպելական մոտիվների հետ գիտակցված կամ ակամա զուգորդումները:

Սայաթ-Նովայի առասպելականացումն ըստ իս ընթացել է երեք տարբեր շրջաններում.

Ա. Բանաստեղծի մահվան ընդունված թվականից՝ 1795 թվականից որոշ ժամանակ անց առավելապես ընտանեկան միջավայրում, ինչի մասին վկայում է Գևորգ Ավվերդյանի «Սայաթ-Նովու տոհմի ավանդութենն

ու նրա մասին դարսված գրույցը ասում են՝» հիշատակությունը:

Բ. Գևորգ Ախվերդյանի կողմից բանաստեղծի դավթարի ու կենսագրության ուսումնասիրության շրջանում՝ 1840-ական թվականներին, ինչը կրկին փաստվում է Ախվերդյանի՝ Սայաթ-Նովայի կենսագրության աղբյուրի նկարագրությամբ՝ «մեծերուց լսածն ասելով պատմում են»:

Գ. Բանաստեղծի ծննդյան ենթադրյալ 200-ամյակի օրերին, երբ Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի և Գևորգ Բաշինջաղյանի կողմից նրա նահատակության վայրում գերեզմանաքար-հուշարձան է կանգնեցվում, հիմնադրվում է նրան նվիրված տոնը:

Բանաստեղծի կենսագրության աղբյուրների ու դրանց տեսակի վերաբերյալ Ախվերդյանի վկայություններից կարելի է ենթադրել, որ մինչև հարցումներն էլ Սայաթ-Նովայի ընտանեկան-բարեկամական միջավայրում պատմվել են գրույցներ, որոնք արդեն ունեն ընդունված վիպական-առասպելական մոտիվներ:

Ընդհանրապես բանաստեղծի ողջ կյանքը մի մեծ ավանդություն է, համեմայնդեպես այդ հատկանիշներով է այն մեզ ներկայանում Գևորգ Ախվերդյանի գրքի «Յառաջաբանում»: Թիֆլիսցիներից լսած գրույցների հիման վրա շարադրված կենսագրությունը գրեթե ամբողջությամբ կրկնում է աշուղների մասին, աշուղական ասքերում, դաստաններում ու խաղերում իրացվող վիպական մոտիվների կայուն հարացույցը, որն էլ ծիսաառասպելական ընթերցումների հնարավորություն է տալիս:

Վիպական, առասպելական մոտիվները կապված են Սայաթ-Նովայի կյանքի կարևոր շրջանների հետ, հատկապես մեծ նշանակություն ունի աշուղից-հոգևորական կերպարային անցումը: Ընդհանրապես, բանաստեղծի կերպարի այս երկփեղկվածությունը թերևս զորեղ ազդեցություն է գործել ոչ միայն ժամանակակիցների վրա, այլև հետագա շրջանում նրա առասպելականացման հիմնական ազդակը դարձել: Սիրահար աշուղ-հոգևորական կերպարային անցման հետ են կապվում վիպական մյուս մոտիվներն ու ձևավորված դիպաշարերը:

Սենք առանձնացրել ենք Սայաթ-Նովայի մասին տարբեր ժանրերի բանահյուսական ստեղծագործություններից մեզ հայտնի վիպական մոտիվներն ու աշուղական երաժշտաբանաստեղծական ասքերի դիպաշարերի հետ համեմատությամբ վերակազմել ենք Սայաթ-Նովայի կյանքի վիպաառասպելական դիպաշարը:

Այսպես՝ դաստաններում՝ սիրային թեմայով աշուղական պոեմներում, աշուղների կերպարի ներկայացումը սկսվում է մանկությունից: Իրացվում է **մանկան օժտվածության** մոտիվը.

¹ Սայաթ-Նովա, լույս գցած աշխատասիրութենով Գեորգա Ախվերդյան, Մոսկվա, 1852, էջ ԺԲ, ԺԴ, ԺԵ:

1. Մանկան սկզբնական օժտվածություն

Խոսելով Արութինի ծնողների ու մանկության մասին Ախվերդյանը պատմում է նրա ջուլհակ լինելու հայտնի գրույցը, նոր դազգահ հորինելու միջադեպը, ապա նշում. «Մեր վարպետ ջուլհակն երևի շատ վաղ է նկատում իր մեջ քերթողական շնորհքն, որ պստուց պաս պահելով գլուխ է դնում ամէնան խաղին, ու սուրբ Կարապետի կարօղութենով սովորում է քամանչէն, ու չօնգուրն ու ամբուրէն»¹:

Այս ավանդության ընդհանուր հատվածում տեսանելի են աշուղների կայացման մասին ավանդական վիպական հարացույցի տարրեր, որոնք ընդհանրություններ ունեն նվիրագործման ծեսերին: Ըստ այդ հարացույցի՝ հերոսը մանուկ հասակում հանձնվում է, որևէ արհեստավորի, կամ ուսուցչի, վարպետանում, իրեն դրսևորում որպես արժանի ու ընտրյալ, ապա ուխտագնացությամբ արժանանում հովանավոր գործության շնորհին: Հատվածում հիշատակվող Սուրբ Կարապետը հայ աշուղների հովանավորն էր, աշուղներն ուխտագնացության էին գնում հանուն Սբ. Կարապետի կառուցած եկեղեցիներ, երգեր նվիրում նրան ու արժանանում շնորհի: Սբ. Կարապետի կերպարին, գործառույթներին ու Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ հիշատակություններին իր «Հայ առասպելաբանություն» գրքում հանգամանալից անդրադառնում է Սարգիս Հարությունյանը: Բանագետն առանձնացնում է Սբ. Կարապետի ու աշուղների հետ կապված ավանդությունները, որոնցում հիշատակվում է, որ մահմեդական ու քրիստոնյա աշուղներն ուխտի էին գնում Սուրբ Կարապետի եկեղեցիներ և իրենց երաժշտական գործիքներն առանց լարելու մի գիշեր թողնում վանքի տարածքում, իսկ առավոտյան զարմանալի վարպետորեն նվագում. «Հայ (և ոչ միայն հայ) պաշտամունքային ավանդության մեջ ս. Կարապետը հանդես է գալիս բացառիկ գործառույթով, իբրև ստեղծագործական ձիրք շնորհող և արվեստների հովանավոր: Նա առաջին հերթին բանաստեղծ նվագածուներին՝ աշուղներին հովանավորող, նրանց նվագելու, երգելու, ստեղծագործելու ձիրք շնորհող սուրբ է՝ «Չանգլու (Չանգի) փիր», ինչպես ավանդաբար նրան կոչում էին աշուղները», - եզրակացնում է Ս. Հարությունյանը²: Սայաթ-Նովան նույնպես իր ձիրքը, սիրո ներշնչումը համարում էր սբ. Կարապետի տված և նրան ներբողներ հղում:

*Մշո սուլթան սուրի Կարապիտ, երկինք է հասյալ գովքըն քո.
Գլուխ վարթապիտ ժշմարտության, չկար հավասար ոքըն քո,*

¹ Սայաթ-Նովա, է:

² Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000 թ., էջ 150:

*խոսկիրրտ անգին ջավահիր, լալ էս թափյալ բիրնոքըն քո,
Որովայնե երգիր պաքիր, արմացյալ ին ծնողքըն քո.
Անապատեն բարբառեցար, հրաշխսոս շըրթնոքըն քո¹:*

Թեև մենք չունենք Սայաթ-Նովայի ուխտի գնալու ավանդությունը, սակայն ակնհայտ է, որ ուխտագնացությանն ու գործիքների լարման ծեսին մասնակցել է նաև նա, համենայնդեպս, աշուղներին բնորոշ այս առասպելական մոտիվը իրացվում է նրա խաղերում:

2. Բժշկում երաժշտությամբ

Գ. Ախվերդյանի ներկայացրած մեկ այլ ավանդությունում՝ իրացվում է վիպական աշուղների հիմնական գործառույթը՝ բժշկումը երաժշտության միջոցով: Պատմությունը, որը ուսումնասիրողը լսել է «ծերերուց», այն մասին է, թե ինչպես Սայաթ-Նովան Հերակլ Բ-ի տիրության պահին անակնկալ հայտնվում է նրա պալատում և ուրախացնում տիրակալին: Ուշագրավ է այս հատվածից առաջ Գևորգ Ախվերդյանի նշումը, որը աշուղի կերպարի առասպելականացման արտահայտություն է. «Թե շատ զօղ է շանց տընել, շատ անգամ էլ էս հանճարեղ յանկարծախօսն կատարել է հոգետր բժշկի պաշտօնը»²- գրում է ուսումնասիրողը: Այս հիշատակությամբ աշուղն ուղղակի զուգահեռվում է միջինասիական «Բախշին», ով հայտնի էր, որպես հրաշագործ, բժիշկ, երբեմն կախարհ: Նա երաժշտության ուժով հիվանդին ազատում է չար ոգիներից, բժշկում նրան:

3. Հերոսի արագահասություն

«Յառաջաբանում» Գևորգ Ախվերդյանը ներկայացնում է ժողովրդական ավանդության մակարդակի մի գրույց, որ «դարսել են» «Թիֆլիզու խաղ սիրող տղերքն», այն մասին թե ինչպես Հաղպատի վանքում կրոնավոր եղած ժամանակ «Սայեաթ-Նովի ականջն ընկնում է մեկ երևելի օտարական աշղի Թիֆլիզ գալն: Նա վախենալով իր քաղաքի յաղթվելու համար, սաստիկ ձմեռին մտիկ չտված՝ շտապով գալիս է Հաղպատից Թիֆլիզ. ձեռաց վեր է գալի Մեծ Բերդի եկեղեցում ու ոչ ովին բան չ'ասած՝ թաքուն դուռ է սըլքըվում առաջնորդարանից»: Այնուհետև Ախվերդյանը ներկայացնում է, թե ինչպես Հաղպատի առաջնորդ Ղավիթ եպիսկոպոսի սպասավորները փնտրում են վարդապետին և ի վերջո գտնում. «Սայաթ-Նովէն՝ աշխարհականի շորերն հաքին, իր հին ընկեր-

¹ Սայաթ-Նովա, հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1963, էջ 80:

² Սայաթ-Նովա, Ը:

ներու ու բարեկամներու մէջն՝ կամրջի տակն սառած Զոի վրայ նստած, քամանչէն ձեռին՝ բաց է արել Ոոր եկած աշուղի հետ վէճն: Հէնց յաղթելու վրայ է ըլլում, որ վրայ են հասնում իր եպիսկոպոսի սպասավորներն»- ավարտում է պատմությունը Ախվերդյանը և եզրակացնում. «Բայց էս գրուցքն ու սրան նման զուարժ Թիֆլիզեցոց մտաց ցնորքն իսկի հաւատալու բան չ'էն, էնդուր որ մեր մեղօք հնացեալ կրօնատորն անց կու'լէր կացնում կեանքն իր վաղեմի մեղքերու՝ աղօթքով ու պաս պահելով քավելումն»¹:

Սայաթ-Նովայի ստեղծագործության բանահյուսական զուգահեռների ուսումնասիրող բանագետ Արամ Ղանալանյանն ինչպես այս, այնպես էլ Սայաթ-Նովայի մասին մյուս ավանդություններն առավելապես մեկնաբանում է՝ բանաստեղծի իրական կենսագրության հետ համեմատության մեջ և արժևորում այս նյութերը հենց դրանց՝ պատմական ժամարտություն պարունակելու տեսանկյունից: Մասնավորապես այս ավանդության մասին բանագետը նշում է. «Բերված ավանդություններից մեր առջև յուրովի հառնում է մի կողմից հայրենի քաղաքի պատվին խորապես նախանձախնդիր, հարազատ ժողովրդի հետ սերտորեն կապված, բնական ու կատարողական գերազանց տվյալներով օժտված գուսանը, լայնախոհ ու մեծահոգի մարդը, մյուս կողմից՝ տեղագրական, ազգագրական ու հասարակական այն միջավայրը, ուր ապրել, շփվել ու ստեղծագործել է նա»²:

Մեզ այս ավանդությունը հետաքրքիր է նրանում առկա՝ հերոսի **արագ տեղափոխության, օգնության հասնելու** մոտիվներով, որոնք Ոոր իմաստավորում են ստանում աշուղի կերպարի ծիսառասպելական ընթերցման համատեքստում: Աշուղի կերպարը ոչ միայն մեր բանավոր ավանդություն, այլև ողջ արևելքում շատ հատկանիշներով ու գործառույթներով նույնացնում է հեթանոսական առասպելական վիպական հերոսներին, ապա ավելի ուշ քրիստոնեական միջավայրում կապվում պահապան համաքրիստոնեական կամ տեղային սրբերի հետ: Երկու դեպքում էլ կերպարների նույնացման հիմք է դառնում որևէ հատկանիշ: Այս ավանդության դեպքում կարևոր է Սայաթ-Նովա-Տեր Ստեփանոսի արագահասությունը և գործողության ժամանակը՝ սաստիկ ձմեռը: Գործողության՝ արագահասության դեպքում ըստ իս ավանդույթը զուգորդվել կամ ստեղծվել է աշուղների ու սիրահարների հովանավոր Սուրբ Սարգսի մասին առասպելների նմանությամբ:

Վերոգրյալը կարող է փաստվել նաև Կովկասում տարածված «Աշուղ Ղարիպ» անունը կրող սիրավեպի համապատասխան մոտիվներով:

¹ Սայաթ-Նովա, ԺԲ:

² Ղանալանյան Ա., Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1985, էջ 69:

Այսպես՝ Աշուղ Ղարիպը Թիֆլիս վերադառնալու ծանապարհին երգի ուժով խաղաղեցնում է գետի ալիքները, սակայն հետո Ղարիպի ձին չի դիմանում արագընթաց վարգին և սատկում է, հերոսին օգնության է գալիս սուրբ Իլյասը, ով աշուղների հովանավորն է, իսկ ավանդույթի հայկական տարբերակում՝ սուրբ Սարգիսը, որը երագում նրան խմիչք էր մատուցել և իր ձիով Ղարիպին մեկ ակնթաթում հասցնում է Թիֆլիս:

Սուրբ Իլյասի կամ Սարգսի առասպելության հետ Սայաթ-Նովայի այս ավանդությունը կապվում է մի քանի հատկանիշով: Նախ շարժման ուղղությունը՝ Թիֆլիս, շարժման որակը՝ արագահասությունը, որը բնորոշ է սբ. Սարգսին, շարժման նպատակը՝ օգնություն: Հետաքրքիր է նաև գործողության, մրցավեճի վայրը՝ կամրջի տակ, գետի մոտ, որն ըստ ուսումնասիրող Լ. Երնջակյանի արևելյան աշուղների ու նաև Ղարիպի հովանավոր ու շնորհատու Հիդիր Իլյասի կամ Ալ Քադիրի առասպելության բաղկացուցիչ մասն է. «Հիդիր Իլյասը (Քադիր, Քիդր, Հիզիր) մահմեդական հայտնի սրբերից է, որ երբեմն նույնացվում է բիբլիական Եղիայի, երբեմն էլ հնագույն մերձավորարևելյան գարնան աստվածությունների հետ: Թուրքերի ժամանակակից հավատալիքային պատկերացումներում Հիդիր Իլյասը գարնան տոնի՝ հիդրելլեսի առաջին օրը արևածագից առաջ հայտնվում է կամրջի կամ գետի մոտ և մարդկանց իղծերն ու ցանկությունները իրականացնում: Ալ Քադիրը բնութագրվում է իբրև գերբնական ուժերի տեր, կիսահրեշտակ-կիսամարդկային կերպար, որին տրված է հուսահատ մարդկանց փրկելու դերը: Նրան վերագրվում է նաև արհեստավորական միությունների հովանավորի գործառույթը»¹, - գրում է ուսումնասիրողը:

Աշուղ Ղարիբի կերպարը հանդիպում ենք նաև Սայաթ-Նովայի՝ «Մեխոսք ունիմ իլթիմագով, անգաժ արա, օվ աչկի լուս» սկսվածքով խաղում: Այստեղ քնարական հերոսը իրեն համեմատում է այդ հայտնի առասպելական աշուղի հետ:

Գուզիմ բերանըս բաց անիմ, գովքըտ ասիմ թարիփի պես.

Տաս տարի է ման իմ գալիս փադիշահի շարիփի պես.

Օխտն տարի էլ ման գու քամ սագըն ձիդիս Ղարիբի պես՝

Բուբա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ օչով, ա՛չկի լուս՝

Ըստ Սայաթ-Նովայի Թիֆլիս գալու ավանդության մեկ այլ տարբերակի, օտար աշուղին հաղթելուց և քաղաքի տղերքի գնահատանքին արժանանալուց հետո, Սայաթ-Նովան ետ է դարձնում պարտված աշուղի

¹ Երնջակյան Լ., Իրականն ու առասպելականը աշուղական սիրավեպի կատարողական ավանդույթում, ՊԲՀ, էջ 46, ծնթ.:

² Սայաթ-Նովա, նշվ. ժողովածու, էջ 46:

սագը: Ուշագրավ է, որ այս տարբերակում մրցամարտը տեղի է ունենում Սբ. Սարգիս եկեղեցու մոտ¹: Այսինքն՝ անուղղակի, սակայն հիշվում է աշուղների հովանավոր սուրբը, ում հետ, ինչպես տեսանք, Սայաթ-Նովան այս ավանդությունում նույնանում է:

4. Ողբերգական սեր

Թագավորի քրոջ հետ Սայաթ-Նովայի սիրային կապի պատմությունը բանաստեղծի կենսագրության ամենից հիշվող դրվագն է, ինչն անկախ փաստերից ակնհայտ վիպական բնույթ ունի: Ինչպես տեսանք աշուղ հերոսներն էպիկական ասքերում ու սիրային դաստաններում նույնանում են իրական աշուղների կերպարներին և այդպես էլ ընկալվում ունկդրի կողմից: Ողբերգական կամ երջանիկ սիրո մոտիվը իրացվում է շատ ասքերում՝ «Սումմանի և Գյուլփերի», «Էմրահ և Սալվի», «Ղարիբ և Ծահսենեմ», «Աշուղ Քյարամ և Ասլի» և այլն: Բացի սիրո խաղերի քնարական հերոսների հետ նմանությունները, Սայաթ-Նովա-սիրահարի կերպարն հանդիպում է մի ժողովրդական հեքիաթում, որը գրառվել է 1939 թվականին Լոռիում²:

Բովանդակությունը շատ սեղմ հետևյալն է. թագավորը ուխտի է գնում և աղջկան թողնում քաղաքապետի խնամքին: Վերջինս փորձում է տիրանալ արքայադստերը, սակայն աղջիկը դիմադրում է: Քաղաքապետը նամակով գրպարտում է նրան հոր առջև: Թագավորը հանձնարարում է որդուն՝ սպանել քրոջը: Եղբայրը համոզված լինելով, որ քույրն անմեղ է, նրան սպանելու փոխարեն տանում է անտառ և ազատ արձակում: Ապա անտառ է գալիս մի ուրիշ թագավորի որսախումբ, նրանց հետ նաև Սայաթ-Նովա անունով պալատական աշուղը: Աղջիկը բարձրանում է աղբյուրի մոտ գտնվող ծառի վրա: Սայաթ-Նովան սագը ձեռքն է առնում, որպեսզի զվարճացնի աղբյուրի մոտ իջևանած թագավորին, ապա աղբյուրից ջուր խմելիս ջրի մեջ տեսնում ծառի վրա գտնվող գեղեցկուհի աղջկան և հիացմունքից ուշագնաց լինում: Աշուղին ուշքի են բերում, սակայն աղջիկը չի ցանկանում իջնել ծառից: Միայն Սայաթ-Նովային է հաջողվում իր կախարհիչ երգով իջեցնել աղջկան: Թագավորական նազիրը տեսնելով աղջկա գեղեցկությունը, ուզում է խլել նրան, սակայն թագավորն արգելում է և աղջկան կնության է տալիս աշուղին: Ժամանակ անց Սայաթ-Նովան թագավորական նազիրի ուղեկցությամբ կնոջն ուղարկում է հոր տուն: Երգիիրը ճանապարհին փորձում է տիրանալ աշուղի կնոջը, բայց չի հաջողվում: Ապա նազիրը սպանում է կնոջ երե-

¹ Սկանդար-Նովա Գ., Սայաթ-Նովայի շուրջ, «Հովիտ», 1913, թիվ 14, էջ 214-215:

² Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, Երևան, 1977, էջ 415-424:

խաներին, իսկ կինը փրկվում է, փախչում հայրական քաղաք և գաղտնի ծառայության անցնում հոր պալատում: Այստեղ էլ նրան գտնում է Սայաթ-Նովան: Ճշմարտությունը բացահայտվում է, և չար նազիրը, պառավն ու քաղաքապետը պատժվում են: Հեքիաթի դիպաշարը բավական հայտնի ու տարածված է, ինչպես հայ, այնպես էլ արևելյան ժողովուրդների մոտ: Նորություն է այն, որ հեքիաթը Սայաթ-Նովայի հետ է կապվել, ինչը թերևս տեղի է ունեցել բանաստեղծի սիրո պատմության, ինչպես նաև նրա պալատականների խարդավանքների մասին հիշատակությունների ազդեցությամբ:

Հետաքրքիր է, որ այստեղ էլ ինչպես վերևում բերված ավանդություններում, Սայաթ-Նովան նվագում ու երգում է ջրի կամ աղբյուրի մոտ, մի դեպքում՝ անտառում, մյուս դեպքում՝ աղջկա հոր քաղաքում. «Աշխարե-աշխարի ման են գալի, որդի մարդ են ջիլմ՝ հարց են ըլմ, որդի ծմակ են ջիլմ՝ տակն ու վրա են անլմ, որդի շեն են տենլմ, հարց են ըլմ, հմա մի տեղ էլ գոլմ չեն: Որ շատ գալիս են, դուս գալի իրա կնգա հոր քաղաքը: Էդ քաղքընը գնլմ են մի ախարի կշտի մատլմ, որ կնանիքը գան ջուրը, բալի իրա կնգանը մեչներուն տենա: Ըտի Սայաթնովն էլ իրա սազը վի կալած, ջուռա-ջուռա խաղեր ա ասլմ, չիմ կնանիքը հվաքվլմ են թամաշա»¹: Գետը, ջուրը որպես գործողության վայր, ինչպես տեսանք, նաև աշուղների հովանավոր սրբերի հետ է կապվում:

5. Մարտիրոսական վախճան

Կրկին վիպական, սակայն վկայաբանական ավանդության մակարդակում է ներկայացվում Սայաթ-Նովայի վախճանը: Ըստ ավանդության հերոսը զոհվում է սրբազան վայրում՝ եկեղեցում, անհավատների՝ Աղա Մահմեդ խանի հրոսակների զենքով՝ չուրանալով հավատը: Մեկ այլ ավանդությամբ՝ Սայաթ-Նովան տեսնելով, որ խանի զորքերը սկսել են կոտորածը, վերցնում է իր քամանչան և գնում է խանի մոտ, որպեսզի համոզի նրան դադարեցնել ավերը: Խանի մոտ չհասած, սակայն, նրա զինվորները սպանում են աշուղին:

Վիպական-առասպելական համատեքստում է այս մոտիվը մեկնաբանում Ա. Ղանալանյանը. «Այդորինակ մոտիվներից է մեր կարծիքով, Սայաթ-Նովայի կողմից քամանչան ձեռին Աղա-Մահմադ խանին ընդառաջ գնալու պատմությունը, որը հեռվից-հեռու հիշեցնում է ծերունի արաբ զորականի՝ Սասունցի Դավթին նույն նպատակով ընդառաջ գնալու վիպական դրվագը: Բացառված չէ, որ հիշյալ մոտիվը հորինված լինի արևելքում ընդունված և չգրված օրենքի ուժ ունեցող այն սովորույթի հիման վրա, ո-

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, էջ 422:

րով աշուղը կամ բանաստեղծը իրավունք ուներ մուտք գործելու նույնիսկ թագավորի մոտ և ազատորեն հայտնելու նրան իր միտքը»¹:

Ընդունելով այս մեկնաբանությունը, ավելացնենք նաև, որ բանաստեղծի մահվան այս երկու ավանդությունները լավագույնս ներկայացնում է նրա կերպարի երկփեղկվածությունը: Սայաթ-Նովայի այսպիսի վախճանի մոտիվն ըստ իս, ինչ-որ առումով կարելի է համարել նաև որպես մասնագիտությամբ, շնորհիմ դավաճանելու փոխհատուցում, պատիժ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Սայաթ-Նովա աշուղ-բանաստեղծի կերպարը առասպելականացման մի քանի փուլ է անցել, որոնք հստակորեն տեսանելի են նրա հետ կապված բանահյուսական տեքստերում, դրանց առանձին վիպական ու առասպելական մոտիվների տեսքով: Սայաթնովագիտությունը նախկինում այդ ավանդությունները դիտել է, որպես բանաստեղծի կենսագրության փաստերի վերականգնման աղբյուր: Չմերժելով այդ մոտեցումը, փորձեցինք վիպական-առասպելական մոտիվների առանձնացմամբ ցույց տալ նաև կերպարի առասպելաբանական ընթերցման հնարավորությունը:

Այս ուսումնասիրության մեջ մենք անդրադարձանք միայն առասպելականացման բանահյուսական փուլերին: Սայաթ-Նովայի վիպական-առասպելական կերպարի ստեղծմանը մեծապես նպաստել են նրան նվիրված Հովհ. Թումանյանի և այլ հեղինակների ստեղծագործություններն ու նույնիսկ գիտական ուսումնասիրությունները: Ավելի ուշ շրջանում սիրահար աշուղի, ապա նաև փիլիսոփայի կերպարի վերջնական ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել գեղարվեստական երկու հանրահայտ ֆիլմերը՝ Կ. Արզումանյանի 1960 թվականին նկարահանած «Սայաթ-Նովան» և Ս. Փարաջանովի՝ 1968-ին թողարկված «Նռան գույնը»:

Ժողովրդի հիշողության մեջ ու ընկալումներում Սայաթ-Նովան շարունակում է ապրել որպես վիպական հերոս, որի առասպելականացմանը մեծապես նպաստել ու լավագույն բնութագիրը տվել է Հովհ. Թումանյանը. «Եվ ի՞նչ գեղեցիկ է, ծշմարիտ, որ էսպես է մեր վիթխարի Սայաթ-Նովան. մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկած սիրո հրդեհով, նրա լուսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և՛ դեպի էն «զալումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրծվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը, և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Հայրացավ, բայց երբեք չհարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց»²:

¹ Ղանալանյան Ա., Հայ գրականությունը և բանահյուսությունը, էջ 78:

² Թումանյան Հովհ., Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը, երկերի ժողովածու չորս հատորով, հ.4, Երևան, 1969, էջ 185: